Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵԶՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading, 10rd December 2023 Bulletin 52/2023

Third Sunday of Advent (Eve of the fast of St. Hagop)

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 2 ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ1:1-12

Պօղոս, Սիղուանոս ու Տիմոթէոս, Թեսաղոնիկեցիներու եկեղեցիին՝ մեր Հայր Աստուծմով ու Տէր Յիսուս Քրիստոսով. շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Քրիստոսէ:

Պարտական ենք ամէն ատեն Աստուծմէ շնորհակալ ըլլալ ձեզի համար, եղբայրնե՛ր, ինչպէս որ արժանավայել է. քանի որ ձեր հաւատքը շատ կ'աճի, եւ ձեզմէ իւրաքանչիւրին սէրը կ'աւելնայ իրարու հանդէպ: Ուստի մենք ալ կը պարծենանք ձեզմով Աստուծոյ եկեղեցիներուն մէջ, ձեր համբերութեան ու հաւատքին համար՝ ձեր բոլոր հալածանքներուն եւ տառապանքներուն մէջ, որոնց կը հանդուրժէք: Ասիկա Աստուծոյ արդար դատաստանին ապացոյցն է՝ որպէսզի դուք արժանանաք Աստուծոյ թագաւորութեան, որուն համար կը չարչարուիք ալ: Քանի որ Աստուծոյ քով արդարութիւն է տառապանք հատուցանել ձեզ տառապեցնողներուն, իսկ ձեզի՝ տառապանք կրողներուդ՝ անդորրութիւն մեզի հետ, երբ Տէր Յիսուս յայտնուի երկինքէն՝ իր հզօր հրեշտակներով, բոցավառ կրակով վրէժ առնելու անոնցմէ՝ որ չեն ճանչնար Աստուած, ու չեն հնազանդիր մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի աւետարանին: Անոնք պիտի պատժուին յաւիտենական աւերումով՝ վտարուելով Տէրոջ ներկայութենէն եւ անոր ոյժին փառքէն, երբ ինք գայ փառաւորուելու իր սուրբերուն մէջ, ու այդ օրը սքանչացումի առարկայ ըլլալու բոլոր հաւատացեալներուն մէջ (որովհետեւ դուք հաւատացիք ձեր մէջ տրուած մեր վկայութեան): Հետեւաբար ամէն ատեն կ'աղօթենք ձեզի համար, որ մեր Աստուածը արժանացնէ ձեզ ձեր կոչումին, եւ զօրութեամբ իրագործէ իր բարութեան ամբողջ բարեհաճութիւնն ու հաւատքին գործը. որպէսզի մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի անունը փառաւորուի ձեր մէջ, եւ դուք ալ անոր մէջ, մեր Աստուծոյն ու Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքին համաձայն:

The Epistle of St Paul to the 2 Thessalonians 1:1-12;

Paul, Silas [a] and Timothy,
To the church of the Thessalonians in God our Father and the Lord Jesus Christ:
Grace and peace to you from God the Father and the Lord Jesus Christ.

Thanksgiving and Prayer

We ought always to thank God for you, brothers and sisters, [b] and rightly so, because your faith is growing more and more, and the love all of you have for one another is increasing. Therefore, among God's churches we boast about your perseverance and faith in all the persecutions and trials you are enduring.

All this is evidence that God's judgment is right, and as a result you will be counted worthy of the kingdom of God, for which you are suffering. God is just: He will pay back trouble to those

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

who trouble you and give relief to you who are troubled, and to us as well. This will happen when the Lord Jesus is revealed from heaven in blazing fire with his powerful angels. He will punish those who do not know God and do not obey the gospel of our Lord Jesus. They will be punished with everlasting destruction and shut out from the presence of the Lord and from the glory of his might on the day he comes to be glorified in his holy people and to be marvelled at among all those who have believed. This includes you, because you believed our testimony to you.

With this in mind, we constantly pray for you, that our God may make you worthy of his calling, and that by his power he may bring to fruition your every desire for goodness and your every deed prompted by faith. We pray this so that the name of our Lord Jesus may be glorified in you, and you in him, according to the grace of our God and the Lord Jesus Christ. ՚

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 14:12-24

Զինք հրաւիրողին ալ ըսաւ. «Երբ ճաշ կամ ընթրիք կը սարքես, մի՛ կանչեր բարեկամներդ, ո՛չ ալ եղբայրներդ. ո՛չ ազգականներդ, ո՛չ հարուստ դրացիներդ, որպէսզի անոնք ալ փոխարէնը չհրաւիրեն քեզ՝ ու հատուցում չըլլայ քեզի: Հապա երբ կոչունք կը սարքես՝ հրաւիրէ՛ աղքատները, պակասաւորները, կաղերը եւ կոյրերը, ու երանելի՛ պիտի ըլլաս, որովհետեւ անոնք չեն կրնար փոխարէնը հատուցանել քեզի. արդարեւ արդարներուն յարութիւն առած ատե՛նը փոխարէնը պիտի հատուցանուի քեզի»:

Հետը սեղան նստողներէն մէկը, երբ լսեց ասիկա, ըսաւ անոր. «Երանի՛ անոր, որ հաց պիտի ուտէ Աստուծոյ թագաւորութեան մէջ»:

Ինք ըսաւ անոր. «Մարդ մը սարքեց մեծ ընթրիք մը, ու հրաւիրեց շատ մարդիկ: Ընթրիքի ժամուն՝ ղրկեց իր ծառան, որպէսզի ըսէ հրաւիրեալներուն. "Եկէ՛ք, որովհետեւ արդէն ամէն բան պատրաստ է": Բոլորն ալ միաբերան սկսան հրաժարիլ: Առաջինը ըսաւ անոր. "Ես արտ մը գնեցի, եւ հարկ է որ մեկնիմ ու տեսնեմ զայն. կը խնդրեմ քեզմէ, հրաժարած նկատէ զիս": Միւսը ըսաւ. "Հինգ զոյգ եզ գնեցի, եւ կ'երթամ որ փորձարկեմ զանոնք. կը խնդրեմ քեզմէ, հրաժարած նկատէ զիս": Միւսը ըսաւ. "Կնոջ մը հետ ամուսնացայ. ուստի չեմ կրնար գալ": Ծառան եկաւ ու պատմեց իր տիրոջ այս բաները: Այդ ատեն տանուտէրը բարկացաւ եւ ըսաւ իր ծառային. "Ծուտո՛վ դուրս ելիր՝ դէպի քաղաքին հրապարակներն ու փողոցները, եւ հո՛ս բեր աղքատները, պակասաւորները, կաղերն ու կոյրերը": Ծառան ալ ըսաւ. "Տէ՛ր, կատարուեցաւ ինչ որ հրամայեցիր, բայց տակաւին տեղ կայ": Տէրը ըսաւ ծառային. "Դո՛ւրս ելիր դէպի ճամբաներուն գլուխներն ու ցանկապատերը, եւ հարկադրէ՛ գտածներդ՝ որ հոս մտնեն, որպէսզի տունս լեցուի": Որովհետեւ, կ'ըսեմ ձեզի, այդ հրաւիրուած մարդոցմէն ո՛չ մէկը պիտի ճաշակէ իմ ընթրիքէս»:

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 14:12-24


Christ at the Table of Pharisee

Then Jesus said to his host, "When you give a luncheon or dinner, do not invite your friends, your brothers or sisters, your relatives, or your rich neighbors; if you do, they may invite you back and so you will be repaid. But when you give a banquet, invite the poor, the crippled, the lame, the blind, and you will be blessed. Although they cannot repay you, you will be repaid at the resurrection of the righteous."

The Parable of the Great Banquet

When one of those at the table with him heard this, he said to Jesus, "Blessed is the one who will eat at the feast in the kingdom of God."

Jesus replied: "A certain man was preparing a great banquet and invited many guests. At the time of the banquet he sent his servant to tell those who had been invited, 'Come, for everything is now ready.' "But they all alike began to make excuses. The first said, 'I have just bought a field, and I must go and see it. Please excuse me.'

“Another said, ‘I have just bought five yoke of oxen, and I’m on my way to try them out. Please excuse me.’

“Still another said, ‘I just got married, so I can’t come.’

“The servant came back and reported this to his master. Then the owner of the house became angry and ordered his servant, ‘Go out quickly into the streets and alleys of the town and bring in the poor, the crippled, the blind and the lame.’

“ ‘Sir,’ the servant said, ‘what you ordered has been done, but there is still room.’

“Then the master told his servant, ‘Go out to the roads and country lanes and compel them to come in, so that my house will be full. I tell you, not one of those who were invited will get a taste of my banquet.’ ”

ՀՂՈՒԹՅՈՒՆ Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ

Ս. Աննայի՝ Սուրբ Աստվածածնով հղիությունը նկարագրված չէ Աստվածաշունչ մատյանում: Այն մեզ է փոխանցվել Եկեղեցու Սրբազան ավանդության շնորհիվ:

Սուրբ Կույսի ծնողները՝ Ս. Հովակիմն ու Ս. Աննան, երկար ժամանակ երեխա չէին ունենում, քանի որ վերջինս ամուլ էր: Մի օր, երբ Աննան իջնում է պարտեզ՝ աղոթելու, հանկարծ հայտնվում է Տիրոջ հրեշտակը և ավետում, որ ինքը զավակ է ունենալու, ում երանի են տալու բոլոր ազգերը: Աննան գոհություն է հայտնում Աստծուն, որ լսեց իր անդադրում աղոթքներն ու գթաց իրեն: Նա խոստանում է իր զավակին Աստծուն նվիրել:

Նույն այս տեսիլքը երևում է նաև Ս. Հովակիմին՝ հայտնելով բարի լուրը: Սուրբ Կույսի հայրը նույնպես փառք է տալիս Բարձրյալին այդ մեծ շնորհին արժանացնելու համար: Բարեպաշտ ծնողների աղաչանքները լսելի են լինում և ծնվում է դուստր, ում անվանում են Մարիամ, այսինքն՝ լուսավորված: Նա էր այն ընտրյալ անոթը երկրիս վրա, ում Աստված իր առաքինությունների ու արժանիքների շնորհիվ պատվեց լինել Բանն Աստծո մայրը: Որպես մայր նա անհանգստացավ, տառապեց իր Որդու համար, սակայն երբեք չերկնչեց ու չընդդիմացավ Աստծուն՝ քաջ գիտակցելով Բարձրյալից իրեն վստահված առաքելության կարևորությունը:

Հայ եկեղեցին Ս. Աննայի՝ Սուրբ Աստվածածնով հղիության տոնը, հաստատուն կերպով նշում է դեկտեմբերի 9-ին:

CONCEPTION OF ST. MARY BY ANNA

Ս. Աննայի՝ Սուրբ Աստվածածնով հղիությունը նկարագրված չէ Աստվածաշունչ մատյանում: Այն մեզ է փոխանցվել Եկեղեցու Սրբազան ավանդության շնորհիվ: Սուրբ Կույսի ծնողները՝ Ս. Հովակիմն ու Ս. Աննան, երկար ժամանակ երեխա չէին ունենում, քանի որ վերջինս ամուլ էր: Մի օր, երբ Աննան իջնում է պարտեզ՝ աղոթելու, հանկարծ հայտնվում է Տիրոջ հրեշտակը և ավետում, որ ինքը զավակ է ունենալու, ում երանի են տալու բոլոր ազգերը: Աննան գոհություն է հայտնում Աստծուն, որ լսեց իր անդադրում աղոթքների ձայնն ու խղճաց իրեն: Նա խոստանում է իր զավակին Աստծուն նվիրել:

Նույն այս տեսիլքը երևում է նաև Ս. Հովակիմին՝ հայտնելով բարի լուրը: Սուրբ Կույսի հայրը նույնպես փառք է տալիս Բարձրյալին այդ մեծ շնորհին արժանացնելու համար և իր ընտիր արջառներից ու ոչխարներից մատաղ է անում՝ բաժանելով աղքատներին: Բարեպաշտ ծնողների աղաչանքները լսելի են լինում և ծնվում է դուստր, ում անվանում են Մարիամ, այսինքն՝ լուսավորված: Նա էր այն ընտրյալ անոթը երկրիս վրա, ում Աստված իր առաքինությունների ու արժանիքների շնորհիվ պատվեց լինել Բանն Աստծու մայրը: Որպես մայր նա անհանգստացավ, տառապեց իր Որդու համար, սակայն երբեք չերկնչեց ու չընդդիմացավ Աստծուն՝ քաջ գիտակցելով Բարձրյալից իրեն վստահված առաքելության կարևորությունը: Նա առաքինի, հավատավոր մոր, ընտանեկան սրբության պահապանի մարմնացումն է, որին որպես օրինակ պիտի ունենա ամեն մի հայ մայր, ամեն մի հայ աղջիկ, որ պատրաստվում է մայր դառնալ:

Հայ եկեղեցին Ս. Աննայի՝ Սուրբ Աստվածածնով հղիության տոնը հաստատուն կերպով նշում է դեկտեմբերի 9-ին:

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

DAILY BIBLE READINGS FOR 2023 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

11 December	Sts. Minas, Hermogenes, Eugraphius, and John and Alexis who sworn to poverty Proverbs 15:33-16:7; Isaiah 18:7; Philippians 1:27-2:4; Matthew 10:37-42
12 December	Sts. Cornelius the Centurion, Simeon the relative of Christ, Bishop Polycarp of Smyrna, and the Martyrs who perished in the East Wisdom 1:1-7; Jeremiah 16:16-21; Acts 1:12-14; Mark 6:6-13
13 December	2 Thessalonians 2:1-16; Luke 14:25-27
14 December	Sts. Eustratius, Auxentius, Eugenius, Orestes, and Martyrius Proverbs 1:1-9; Nahum 2:1-7; Romans 5:1-5; Matthew 5:1-12
15 December	2 Thessalonians 3:1-18; Luke 15:1-7
16 December	St. James of Nisibis (Hagop Medzpnatsi), Marouke the Hermit and Melitus the Bishop Wisdom 7:12-20; Isaiah 44:1-5; Hebrews 13:17-21; John 9:39-10:10

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ Ս. ՀԱԿՈԲԻ ՊԱՀՔԻ

Բարեկենդան է կոչվում շաբաթապահքերի և Մեծ պահքի նախընթաց օրը: Բարեկենդանին թույլատրվում են չափավոր վայելքներ, խրախճանքներ, խաղեր և ուտեստներ՝ ի հետևություն Եղիային ուղղված հրեշտակի խոսքի. «Ելիր, կեր, որովհետև երկար ճանապարհ ես գնալու» (Թագ. 19:7): «Բարեկենդան» բառացի նշանակում է կենդանություն, բարի կյանք: Իսկ հաջորդ օրվանից սկսվում է պահքը, որը տևում է երկուշաբթիից ուրբաթ ներառյալ:

Ս. Հակոբ Մծբնա հայրապետի պահքի բարեկենդանը նշվում է սրբի տոնից 6 օր առաջ, քանի որ տոնին նախորդում է հնգօրյա պահոց շրջան՝ երկուշաբթիից ուրբաթ օրերին:



Dear Parishioners and Armenian Community Members,

St Yeghiche Armenian Church, has published its 2024 wall calendar, with both Armenian Religious Feast dates, and U.K. holiday dates.

These are out for sale at St Yeghiche Armenian Church, from this Sunday, 19th November 2023, and till stocks last.

We encourage every Armenian household to have one and bring our Lord's blessing to your home and family.

Thank you

St Yeghiche Armenian Church Parish Council

Under the Auspices of Diocese of the Armenian Church of United Kingdom and Ireland

CHRISTMAS *Concert*

An Evening of Seasonal

CHORAL MUSIC AND CAROLS

Performed by St Yeghiche Armenian Church Choir
and guest performers

Soloist include:
Tereza Gevorgyan, Anais Heghoyan and Ben Beurklian-Carter
Organist **Razmik Melkonian**

Musical Director **Aris Nadirian**

SATURDAY 16TH DECEMBER 2023 - 7:30 PM

at St Yeghiche Armenian Church, 13b Cranley Gardens, London SW7 3BB
www.styeghiche.org.uk

FREE ENTRY, all donations on the day will be allocated to
Displaced Armenian Evacuees of Nagorno-Karabagh

T. +44 20 7373 8133 - email: info@styeghiche.org.uk

Reg Charity no. 1173403

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.

«Երանի՛ նրան, ով ճաշ կ'ուտի Աստծու արքայութեան մէջ» (Ղուկ. 14:15):

Քրիստոսասէր եղբայրնե՛ր եւ քոյրեր,

Մեր կեանքի համար կարեւոր դասեր մենք ստանում ենք կեանքի զանազան հանգամանքներից, դէպքերից, օրինակներից: Որքան որ մեր կենցաղին մօտ են այդ օրինակները, այնքան մեզ համար հասկանալի եւ յիշելի են: Այս առումով Քրիստոս բազմաթիւ առօրեայ օրինակներ էր բերում պարզ մարդկանց կեանքից՝ ձկնորսի, վաճառականի, արտ վարողի կամ սերմնացանի, որոնք ամէն օր մարդուն հանդիպող կերպարներ էին:

Վստահաբար կեանք փոխող, իմաստալից զրոյցներով Քրիստոս յաճախ էր ճաշի կամ ընթրիքի սեղանի շուրջ աւետարանում Աստծոյ խօսքը: Եւ պատահական չէ, որ հէնց ընթրիքն էլ դառնում է իր հերթական առակներից մէկի նիւթը՝ Երկնքի Արքայութեան պատկերը մատուցելու համար:

Հրեական պատկերացումները Մեսիայի գալու եւ մարդկութեան կեանքին միջամտելու մասին, երբ պիտի սկսուեր նոր ժամանակների ոսկեդարը: Աստծոյ այդ յայտնութեան պատկերացումների շարքում նաեւ մեծ ճաշկերոյթն էր, ուր պէտք է ուտեստների շարքում մատուցուեր ծովային հրեշ Լեւիաթանը, որի պատկերը յաճախ ենք տեսնում Մկրտութեան սրբապատկերներում՝ Յորդանանում մկրտութեան ջրերի մէջ իբրեւ Փրկչի ոտքերից տակ յաղթուած զօրութիւն: Արքայութիւնում ճաշ ուտելու խօսքում հէնց հրեական այդ պատկերացումն էր, ուր սեղանի շուրջ ընդհանրապէս տեղ չէին կարող ունենալ հեթանոսներն ու մեղաւորները: Այս առակով Քրիստոս ամբողջովին քանդում է հրեական ինքնաբաւ մօտեցումը՝ ինքնակամ հեռացող հրեմեղաւորների եւ հեթանոսներին :

Պաղեստինում երբ մարդ խնջոյք էր կազմակերպում, նախ յայտարարում էր, ուղարկում հրաւէր, բայց խնջոյքի ժամը չէր ասում: Երբ ամէն բան պատրաստ էր լինում, տէրը ծառաներին ուղարկում էր հիւրերին կանչելու եւ նախապէս հրաւէրն ընդունելուց յետոյ հրաժարուելը խիստ ծանր վիրաւորանք էր տանտիրոջ համար:

Առակում տանտիրոջ կերպարի մէջ Աստուած է, նախապէս հրաւէր ստացածները՝ հրեաները: Իրենց պատմութեան ամբողջ ընթացքում հրեաները սպասել էին Աստծո յայտնութեանը՝ Մեսիային, բայց երբ Նա եկաւ, մերժեցին եւ իրենց բարձրամտութեան պատճառով զրկուեցին Աստծոյ Արքայութեան հոգեւոր խնջոյքից: Առակում նախապէս հրաւէրքն ընդունած հիւրերը երբ հրաժարուեցին գալ, իւրաքանչիւրն իր պատճառաբանութիւնը բերեց.

ա/ «Ագարակ գնեցի եւ պէտք է, որ գնամ տեսնեմ. խնդրում եմ քեզ, ինձ հրաժարուա՛ծ համարիր»: Այս պատճառաբանությամբ թէ՛ այն ժամանակ հրաւիրեալը եւ իր պէս շատերը գործնական յարաբերութիւններն աւելի բարձր դասեցին Աստծոյ հրաւէրից: Մեր ժամանակներում եւս մարդիկ շատ յաճախ զբաղուած են աշխարհային իրենց գործերով, եւ ժամանակ չունեն աղօթքի եւ Աստծոյ պաշտամունքի համար: Որոշ մեկնիչներ ագարակը բնութեան օրէնքների մէջ բնութիւնից վեր՝ Կոյսից ծնունդը չընդունելու եւ մերժելու արտայայտութիւն են դիտում, ինչպէս այժմ էլ բնագէտ կամ կենսաբան մէկը կարող է նոյն կերպ մտածել: Հետաքրքիր մեկնութիւն կա ագարակի տակ տեսնելու բնական օրէնքներն ու Քրիստոսի՝ բանականութիւնից դուրս ծնունդը, կեանքը եւ հրաշքները: Ագարակը բնութեան օրէնքների մէջ բնութիւնից վեր՝ Կոյսից ծնունդը չընդունելու եւ մերժելու արտայայտութիւն է, ինչպէս այժմ էլ բնագէտ կամ կենսաբան մէկը կարող է կարծել, որ իր փորձառութեամբ եւ գիտելիքով չի կարողանում ընդունել այդ ճշմարտութիւնը եւ մերժում է:

բ/ **«Հինգ լուծ եզներ գնեցի. գնում եմ դրանք փորձելու. խնդրում եմ քեզ, ինձ հրաժարուա՛ծ համարիր»**: Մարդիկ կան, երբ ձեռք են բերում որեւէ նոր բան, այնքան են նիւթականօրէն դրա հետեւից ընկնում, որ Աստծոյ կանչը անլսելի է դառնում նրանց համար եւ ժամանակ այլեւս չի գտնւում աղօթքի եւ Աստծոյ պաշտամունքի համար: Մարդիկ կան, որոնք մեքենայ գնելով՝ ասում են. «Առաջ մենք կիրակի օրերը եկեղեցին էինք գնում, իսկ հիմա ամբողջ օրը քաղաքից դուրս ենք գնում»: Որքան հեշտ ենք մենք նոր հրապուրանքին, խաղին, նոր ընկերներին տալիս այն ժամանակը, որն Աստծունն է: Հինգ լուծ եզը հինգ զգայարաններով աշխարհին նիւթապէս կապուած մարդիկ են, ըստ այդմ՝ երկրայինով զբաղուածը չի ուզում զբաղուել երկնայինով:

գ/ «Կին եմ առել, դրա համար էլ չեմ կարող գալ»: Նոր ամուսնութիւնը յարգելի եւ ընդունելի պատճառաբանութիւն է եղել գրեթէ բոլոր հին հասարակութիւնների մէջ:

Երկրորդումն Օրինաց գրքում ասւում է. «Եթէ մի տղամարդ նոր է ամուսնացել, ապա նա պատերազմի թող չգնայ. նրա վրայ ոչ մի պարտականութիւն թող չդրուի, ազատ թող լինի իր տան մէջ եւ ուրախացնի իր առած կնոջը» (Բ. Օր.24:5): Թերեւս հրաւէրը նախապէս ընդունած մարդը մտքում հէնց այս օրէնքն ուներ, երբ ասում էր, որ իրեն հրաժարուած համարեն: Անշուշտ մարդու տունը ամենից հաճելի վայրերից է, բայց ցաւալի է, աւելին՝ վտանգաւոր է տան եւ ընտանիքի հանգամանքը եսասէր կերպով գործածելը: Ցաւալի է, որ դէպքեր կան, երբ Աստծոյ կանչն անարձագանք է մնում ոչ թէ ըստ կարիքի, այլ ըստ միտումնաւոր պատճառաբանութեան, ուր շահարկւում է նուիրական եւ սրբազան այնպիսի միջավայրը, ինչպիսին ընտանիքն է: Քանզի յատկապէս այն մարդիկ են բարւոքում իրենց ընտանեկան կեանքը, նեցուկ եւ հենարան լինում միմեանց, որոնք Աստծուն ունեն իրենց սրտում: Ընտանիքում մթնոլորտը լի է օրհնութեամբ, երբ նոյն յարկի տակ ապրողները յիշում են, որ իրենք նաեւ Աստծոյ ընտանիքի անդամներ են:

Վանական մեկնիչներից ոմանք հետաքրքիր այլ անկիւնից են մեկնում այս դրուագը՝ զգուշացնելով , որ անձին բացարձակ պաշտամունք չդարձնելու հանգամանքը: Դէպի աստուածային այս ընթրիք գնալու ճանապարհին իբրեւ օգնական ստեղծուած կնոջը մարդը կարող է դարձնել կուռք, միասին Աստծուն մօտենալու փոխարէն հեռանալով Արարչից եւ դաւաճանել Նրա բարերարութեանը: Սա անմեղ Ադամին պատուիրանով արգելուած պտուղը տուող ընկած Եւան է, որ անէծք է բերում, հիւանդութիւն է ծնում, մահն է իբրեւ ժառանգութիւն թողնում: Իզուր են համոզում. կամքն արդեն գերութեան մէջ է, սիրտը փականքի տակ է: Եւայի փոխարէն Մարիամի աստուածասէր կերպարն է պէտք մատուցել, որ Յովսէփին պարզ հիւսնի աստուածահայր լինելու պատուին առաջնորդեց Աստծոյ առաջ իր խոնարհութեամբ: Այդպիսի ամուսնութեամբ կապուածները Աստծո սիրոյ ճաշի անբացակայ մասնակիցներ կդառնան:

Ընդհանուր իմաստով առակի բուն ուղերձը հրեաներին է ուղղուած՝ զգուշացնելով, որ վազելով իրենց անգամ բարի արարքների երկրային գնահատանքի ետեւից, մարդիկ կորցնում են երկնային պարգեւները ունենալու իրաւունքը: Խոստում տուածներն ասում են՝ ինձ հրաժարուած համարիր: Երբ ուրախ առիթին Տիրոջ հետ լինելու մերժում է լինում, ինչպե՞ս փորձութեան ժամին կմնան Իր հետ: Ինչպէս մեկնիչներից մէկն է հառաչելով ասում. **«Կվերցնե՞նք խաչը ու կը գա՞նք քեզ հետ Գողգոթա, երբ հրաժարուեցինք Քո ընթրիքին գալ»:**

Ընթրիքը երեկոյեան է լինում, աստուածային ընթրիքը խորհրդանշում է աշխարհի փրկութեան մեծ շրջանի երեկոն: Սա մի տեսակ «Ընթրիքի» դարաշրջանի մասին է, երբ մարգարէների, Ս.Գրքի խօսքի քարոզութեամբ հրաւէրն է լինում ընթրիքի, եւ հետո, երբ ամէն բան պատրաստ է, գալիս է ընթրիքի ժամը եւ ուղարկւում է Նա, Ում ձայնը մինչեւ հիմա լսւում է Աւետարանի միջից. «Իսկ երբ ժամանակը իր լրումին հասավ, Աստուած ուղարկեց իր Որդուն» (Գաղ. 4:4): Միջանկեալ այդ ժամանակը՝ հրաւէրից մինչ բուն ընթրիք, պատրաստութեան շրջան է: Ընթրիքի ժամին ուղարկեց իր ծառային՝ մարդացած Խօսք Աստծուն, որ. «Իր անձը ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման լինելով եւ մարդու կերպարանքով խոնարհեցրեց ինքն իրեն» (Փիլպ. 2: 7):

Հրաւէրը մերժելը Յիսուսին Փրկիչ եւ Աստուած չճանաչելն ու չընդունելն է հրեա ընտրեալ խաւի կողմից, որոնք ժողովրդի հոգեւոր եւ աշխարհիկ առաջնորդներն էին: Մարգարէական խօսքերին եւ Աստծուն չվստահելու, անհաւատութեան դառը պտուղներ են այս մերժումները: սրանք: Հոգին հարսն է Աստծոյ (Յիսուս Փեսայից այրիացած հոգու եւ անիրաւ դատաւոր-մտքի պատկերաւոր օրինակը նոյնպէս սա է ցոյց տալիս): Աստծոյ նկատմամբ սիրոյ եւ հաւատի ճգնաժամի արդիւնք է սա: Հաւատ չունեցող սիրտը, ինչպէս յանցագործը, ահաբեկւում է ոչ միայն Յիսուս Քրիստոսի չարչարանքից եւ սխրանքի ճանապարհին հետեւելուց, այլեւ Նրա բարերարութիւնից: Եթէ մենք ճշմարիտ հաւատացեալներ ենք, այդ դէպքում ոչինչ մեզ չի կարող յետ պահել մեզ Աստծոյ սիրոյ ընթրիքին մասնակցելուց: Ոչ միայն «ագարակը», «լուծ եզը», «կինը», այլ ամբողջ աշխարհը՝ ոչ հրեշտակները, ոչ երկան, ոչ ապագան չեն կարող բաժանել մեզ Աստծուց:

Աւետարանում մի դրուագ կա, երբ մի երիտասարդ ինքնակամ հրաժարւում է Քրիստոսին յետեւելուց այն պատճառով, որ մեծ հարստութիւն ուներ: Հնարաւոր չէ միաժամանակ ամբողջ սրտով սիրել երկու տարբեր, անգամ իրար հակասող աշխարհներ:

Բնականաբար անցողիկը, ժամանակաւորը պէտք է որ զոհաբերուի՝ յանուն հաւիտենական կեանքի, անմահ եւ իրապէս սիրող Աստծոյ մօտ լինելու համար: Հարուստ երիտասարդի պէս մեզանից շատերն էլ շատ են սիրում իրենց «ագարակները», «հինգ լուծ եզները», «կնոջը»: Երբ հիաւիրեալները մերժեցին գալ, տանտէրը ծառային պատուիրեց նոր հիւրեր կանչել: Երկու տարբեր խմբեր եղան կանչուողները:

Նախ քաղաքի հրապարակներից եւ փողոցներից կոյրերը, կաղերը, հաշմանդամները, որոնք մեղքերով վնասւած եւ հիւանդ, բայց Յիսուսին հաւատացած հրեա մաքսաւորներն ու մեղաւորներն էին: Երկրորդ անգամ ճանապարհներին եւ ցանկապատների առաջ եղող մարդկանց հրաւէր եղաւ, որ գան եւ Տիրոջ տունը լցուի: Այս վերջինները հեթանոսներն էին տարբեր ազգերից, աւելի ցածր դասակարգի մարդիկ, որ կամաչեն մտնել եւ իրենց համոզել է պէտք, Աւետարանի խօսքով անկեղծ փնտրող այս հոգիներին Փրկչին հանդիպեցնել է պէտք, որ լցնեն Աստծոյ հարկը եւ լրացնեն ընկած հրեշտակների տեղերը:

«Այն ժամանակ թագաւորը պիտի ասի նրանց, որ իր աջին են. “Եկէ՛ք, իմ Հօր օրհնեալնե՛ր, ժառանգեցէ՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած արքայութիւնը» (Մատթ. 25:34)

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

Սերը բառ չի, սերը զգացում չի միայն:

Սերը կյանք է եւ գործ:

Եթե Հայրենիքը սիրում ես,

սակայն հայրենիքիդ համար ոչինչ չես անում,

ապա ի՞նչ սեր է այդ:

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս

The Movement of 120,000.00 people
out of their ancestorial homeland
is NOT an evacuation
it's ethnic cleansing.
It's Genocide.

Aid Artsakh (Karabagh)

Help the Artsakh Armenian Families

The St Yeghiche Armenian Church Parish ask you to donate generously to help our compatriots
on
The Ground Relief work for Armenian Evacuees from Nagorno-Karabakh

St Yeghiche Armenian Church Parish has started to raise much needed funds to assist the displaced brothers and sisters of Artsakh and their families .

Kindly donate generously using the following bank details:
Bank HSBC | ST Yeghiche Armenian Church Parish Ltd.
Sort Code 40-02-26 | Account No. 42674432
IBAN GB73MIDL40022642674432 | BIC MIDLGB2106F
If you are a UK tax payer kindly ask for our Gift Aid Form

PayPal
Scan. Pay. Go.

We have provided special collection box at church for your kind attention.

Alternatively you may also use our credit card terminal at church for your convenience.

The funds will be directed towards needy Families.

PLEASE GIVE GENEROUSLY

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By the Armenian Community in United Kingdom for the **over 25 Thousand innocent Souls** of their Compatriots who perished in the 1988 earthquake in Armenia

By the Manoukian Family for the soul of their Mother, who was also a loving Grandmother and Great-grandmother the late **SIRANOUCHE MANOUKIAN (Սիրանուշ Մանուկեան)** on the anniversary of her passing, and for all the old and new deceased members of the **MANOUKIAN** Family

By Mr & Mrs Setrag and Jacqueline Karanfilian and Family for the soul of their Parents who were also a loving Grandparents the late **KHOREN** and **OVSANNA KARANFILIAN (Խորէն և Ովսաննա Գարանֆիլեան)**, **HOVSEP** and **NELLY HOVSEPIAN (Յովսէփ և Նելլի Յովսէփեան), ASHOT** and **SIRAN AFTANDILIAN (Աշոտ և Սիրան Ափթանդիլեան)** also for their Brother and Uncle the late **Dr HRANT KARANFILIAN (Տոքթ Հրանդ Գարանֆիլեան)**, also for all the old and new deceased members of the **KARANFILIAN, HOVSEPIAN, AFTANDILIAN** and **STANBOULIAN (Գարանֆիլեան, Յովսէփեան, Ափթանդիլեան և Ստանպուլեան)** families.

By Keghvart and Vahe Vartanian and family, Lena Vartoukian and family, Dickran Bohdjalian and family for the soul of their Wife, Mother and Sister **CECILE VARTANIAN (Սէսիլ Վարդանեան)** on the anniversary of her passing, and for all the old and new deceased members of the **VARTANIAN** Family.

By James Salbashian and Family for the soul of their Father the late **HAGOP KHOSROF SALBASHIAN (Յակոբ Խոսրով Սալպաշեան)** on the 30th anniversary of his passing, also for their twin uncles the late **SEMPAD & NAZARET SALBASHIAN (Սմբատ եւ Նազարէթ Սալպաշեան)** on the 10th anniversary of their passing, also for all the old and new deceased members of the **SALBASHIAN** Family.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Armenia's earthquake on 7th December 1988

On 7th December 2023, we marked the 35th anniversary of the devastating earthquake that occurred in Spitak, Armenia, at 11:37am on December 7th, 1988. Our hearts and prayers go out to the families of the victims.

We express our gratitude to all those who rushed to aid Armenians, including the United Kingdom. The earthquake, which measured eight on the Richter scale, completely destroyed the cities of Gyumri, Vanadzor, and Spitak, as well as many villages.

The event was beyond words to describe. We are thankful for the world's support during this tough time. Our prayers go to all who lost their life and may rest in peace with our Lord.

4: Հոգեհանգիստ - Memorial Service

REQUIEM SERVICE

Requiem service is a venerable tradition in the Armenian Orthodox Church, where we remember and pray for the souls of our departed loved ones. In the Armenian Church we believe that with the resurrection of Christ the barrier between the living and the dead has been vanished, since by His Resurrection Christ conquered death. The Church of those who have fallen asleep in Christ is as real and actual as of those who live on this earth. This is why our church teaches us that not only can we pray for those who have departed but they can also pray for us and intercede on our behalf until the second coming of Christ when all will stand before the Righteous Judge.

In the Armenian Orthodox Church the most common times for Requiem Service are on the 7th and/or 40th Day following a death, on the occasion of the 1st year anniversary, as well as the Mondays following the 5 Tabernacle Feasts of our Church. On these days the loved ones and friends of the deceased gather together for a requiem prayer with the conviction that death is not simply the end but rather a passing into a new reality, where the immortal soul of man enters into another position, a place where there is no sickness and pain.

During the requiem service the faithful participate with the singing of hymns, then the gospel is read for the soul of the departed, and at the end of the service the priest recites the prayer "Christ, Son of God" during which he mentions the name of the departed ones asking from the "forbearing and compassionate" Son of God, to remember and have mercy on them.

"Truly, truly, I say to you, unless a grain of wheat falls into the earth and dies, it remains alone; but if it dies, it bears much fruit. He who loves his life loses it, and he who hates his life inthis world will keep it to life eternal. If anyone serves Me, he must follow Me; and where I am,there My servant will be also ; if anyone serves Me, the Father will honor him." (John 12:24-26)

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the administration number at **07970 146280**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.**

Your kind donations are gratefully accepted:

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

We welcomes your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***"St Yeghiche Armenian Church"***.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

PayPal

Scan. Pay. Go.

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403.

Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.